ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Մարմարաշեն համայնք, Երևան-Արտաշատ խճղ. 57
Հեռ./0236/6- 46-25, hakobyan.edik@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 30 » նոյեմբերի 2011 թվականի N 10 -Ն

ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 Թ. ԿԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

Որոշեցին. - 1. Մարմարաշեն համայնքի 2011թ.վարչական բյուջեի պհուստային ֆոնդը պակասեցնել 600.0 հազ. դրամով:

2. Մարմարաշեն համայնքի 2011թ.վարչական բյուջեի 8-1-1 ծրագիրն ավելացնել 600.0 հազ. դրամով, որից
ա/ 4261 հոդվածը ավելացնել 300.0 հազ. դրամով
բ/ 4269 հոդվածը ավելացնել 300.0 հազ. դրամով:

Կողմ (6) Դեմ (0) Ձեռնպահ (0)

1. Մ.Ավագյան
2. Ղ. Արոյան
3. Ա. Իսագուլյան
4. Կ.Կարապետյան
5. Հ. Հակոբյան
6. Ս. Հովսեփյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Մարմարաշեն համայնք, Երևան-Արտաշատ խճղ. 57
Հեռ./0236/6- 46-25, hakobyan.edik@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 30 » նոյեմբերի 2011 թվականի N 12- Ն

2012 Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով.

Որոշեցին

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նածագծին համապատասխան՝ նոր շենքերի՝ շինությունների / ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է՝
   Հիմնական օբյեկտների համար՝
   ա/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 15000 դրամ:
   բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
   բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյելտների համար՝ մինչև 30000 դրամ
   բբ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյելտների համար՝ մինչև 50000 դրամ
   բգ/ 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյելտների համար՝ մինչև 70000 դրամ
   գ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյելտների համար՝ 3000 դրամ
   դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյելտների համար՝ 5000 դրամ:
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցում, ուժեղացման վերականգնման արդիականացման, կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ավելացնող այլ կառույցների հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման, կամ

շենքի գործառնական նշանակության փոփոխության դեպքում տեղական տուրքը սահմանվում է 3000 դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 5000 դրամ:
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
   1/ ոգելից խմիչքի վաճառքի թույլատվության համար՝ հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 1000 դրամ:
   2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլատվության համար՝ հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ուրաքանչյուր եռամսյակի համար 1500 դրամ:
5. Համայնքի տարածքում՝
   ա/ բացօդյա առևտուր կազմակերպելու թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ,
   բ/ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ:
6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլատվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
   ա/ առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ
   բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ
   գ/ բաղնիքների/ սաունաների / համար՝ 200000 դրամ
   դ/ խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ
   ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ
   զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ
8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլատվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
   ա/ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը մինչև 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ
   բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը մինչև 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ
   գ/ այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ
   ե/ դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ
9. Համայնքի արխիվից փաստաթղթի պատճենները և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:
10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 4000 դրամ:

11-1. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը համայնքում կիրառել 0.5 գործակցով:

12. Համայնքի տարածքում շինարարության, շինության արտաքին տեսքը փոխող, վերակառուցման աշխատանքների հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար ՏԻՄ մատուցախ ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ:

13. ՏԻՄ տնօրինության տակ գտնվող հողեր հատկացնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 2500 դրամ:
14. ՏԻՄ կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման վճար՝ 3000 դրամ:

Հաստատել 2012թ. տեղական տուրքերի և վճարների վերը նշված դրույքաչափերը:

Կողմ (6) Դեմ (0) Ձեռնպահ (0)

1. Մ.Ավագյան կողմ
2. Ղ. Արոյան - կողմ
3. Ա. Իսագուլյան կողմ
4. Կ.Կարապետյան - կողմ
5. Հ. Հակոբյան կողմ
6. Ս. Հովսեփյան - կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ՀԱԿՈԲՅԱՆ